ISAA | Information Systems Agency of Armenia

# Կայքի ստեղծման ուղեցույց NewMoon CMS

Մարտ 2026 v1.1



# Բովանդակություն


1. Հապավումներ և հասկացություններ ........ 3
2. Ներածություն ........ 4
3. Կայքի կառուցման նախապատրաստում ........ 5
4. Մուտք և անվտանգություն ........ 6
5. Գլխավոր էջ (Home) ........ 7
   5.1 Nag Bar ........ 8
   5.2. Banner ........ 9
   5.3 Content Containers/Գլխավոր էջի բովանդակություն ........ 16
   5.4 Content Display ........ 22
6. Pages ........ 23
7. Articles ........ 25
8. Categories ........ 27
9. Header ........ 29
9. Footer ........ 38

# 1. Հապավումներ և հասկացություններ

- **CMS** - Բովանդակության կառավարման համակարգ (Content Management System)
- **ՀՏՀԳ** - «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամ
- **Directus** - Բաց կոդով (Open Source) համակարգ, որի հիման վրա մշակված է NewMoon-ը
- **WCAG 2.1 (Level AA)** - Թվային մատչելիության միջազգային ստանդարտ տեսողական սահմանափակումներ ունեցող անձանց համար
- **2FA** - Կրկնակի նույնականացում (Two-Factor Authentication), անվտանգության լրացուցիչ շերտ
- **UI/UX** - Օգտատիրոջ փոխազդեցության և փորձառության դիզայն
- **Header** - Կայքի վերին հատված՝ լոգոտիպ, անվանում, հիմնական մենյու
- **Footer** - Կայքի ստորին հատված՝ տեղեկատվական տեքստեր, հեղինակային հղումներ, լոգոտիպ
- **Page** - Ստատիկ էջ, որտեղ բովանդակությունը հաճախ չի փոխվում
- **Article** - Դինամիկ բովանդակություն՝ հաճախ ավելացվող նյութեր (օրինակ՝ նորություններ, հրամաններ)
- **Category** - Դասակարգում՝ էջերի և հոդվածների խմբավորման համար
- **Slug** - URL-ի վերջին տարբերակիչ հատվածը (գեներացվում է ինքնաշխատ եղանակով, կարող է խմբագրվել, օրինակ՝ website.gov.am/լուրեր: «Լուրեր»-ը հանդիսանում է Slug)
- **Translation** - Թարգմանություններ՝ նույն բովանդակության լեզվական այլ տարբերակը
- **Create New** - Նոր տարր ստեղծելու գործողություն
- **Add Existing** - Արդեն ստեղծված տարր ավելացնելու գործողություն
- **Save** - Փոփոխությունները պահպանելու կոճակ
- **Enabled** - Տվյալ ֆունկցիայի/բլոկի ակտիվացում
- **Layout** - Էջի/բովանդակության ցուցադրման ձև
- **Featured Image** - Բովանդակության գլխավոր նկար
- **DevOps մասնագետ** - Տեխնիկական մասնագետ՝ կայքի թարմացումների և տեխնիկական սպասարկման համար
- **Q&A** - Հարց և պատասխանի ծալվող բլոկ, որտեղ վերնագրում գրվում է հարցը, իսկ պատասխանը՝ հիմնական բովանդակության բաժնում:

## 2. Ներածություն

New Moon բովանդակության կառավարման համակարգը (CMS) «Հայաստանի Տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՏՀԳ) կողմից մշակված կայքերի ստեղծման գործիք է, որը թույլ է տալիս պետական մարմիններին ստեղծել և կառավարել պաշտոնական կայքեր՝ առանց ծրագրավորման գիտելիքների:

New Moon-ը ստեղծվել է **Դիրեկտուս** (Directus) **բաց կոդով** (Open Source) համակարգի հիման վրա, ինչը **բացառում է հետագա կախվածությունը մատակարարից**: Այն թույլ է տալիս ունենալ արագ կառուցվող կայք, որը համապատասխանում է **«Հենակետ»** դիզայն համակարգի և անվտանգության ստանդարտներին:

### Ի՞նչ կարող է անել պետական մարմինը New Moon-ի միջոցով

New Moon-ի միջոցով պետական մարմինը կարող է.

- կառուցել կայք առանց ծրագրավորման գիտելիքների՝ օգտագործելով հաստատված կաղապարը և բլոկները (բաժինները),
- ստեղծել և խմբագրել բովանդակություն (լուրեր, հայտարարություններ, էջեր, փաստաթղթեր)՝ դերերի բաշխման գործընթացների միջոցով,
- օգտագործել միասնական դիզայն համակարգ (համապատասխանեցված դասավորություն, հասանելիություն և UI տարրեր),
- գործարկել ավելի արագ, քանի որ հոսթինգը, անվտանգության հիմքը, թարմացումները և աջակցությունը կառավարվում են կենտրոնացված կարգով,
- պահպանել բովանդակության կառուցվածքը (կատեգորիաներ, թեգեր, մենյուներ, մեդիադարան), ինչը դյուրին է դարձնում որոնումը և տվյալների վերօգտագործումը:

New Moon գործիքով ստեղծված կայքը լիովին համապատասխանում է **WCAG 2.1 (Level AA) միջազգային ստանդարտին**՝ ապահովելով թվային մատչելիություն և հասանելիություն տեսողական սահմանափակումներ ունեցող անձանց համար:

### Ո՞ւմ համար է նախատեսված ուղեցույցը

Ուղեցույցը նախատեսված է հետևյալ պետական մարմինների աշխատակիցների համար.

- կայքի ադմինիստրատորներ,
- բովանդակություն ստեղծողներ,

- մամուլի կամ հասարակայնության հետ կապերի պատասխանատուներ:

### Հոսթինգ և սպասարկում

Մինչև 2027 թվականի հունվարի 1-ը ՀՏՀԳ-ն կապահովի հոսթինգի ծառայությունների ֆինանսավորումը և գործիքի տեխնիկական սպասարկումը: Նշված ժամկետի ավարտից առաջ կձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ կայքերն ամբողջությամբ պետական մարմինների սեփական տիրույթներ տեղափոխելու նպատակով: Տեղափոխումից հետո պետական մարմինների կողմից անհրաժեշտ կլինի ունենալ առնվազն մեկ DevOps մասնագետ, ով կիրականացնի համակարգի թարմացումները և կապահովի կայքի տեխնիկական սպասարկումը:

## 3. Կայքի կառուցման նախապատրաստում

Կայքի կառուցման գործընթացը դյուրին սկսելու համար նախ անհրաժեշտ է նախագծել կայքի կառուցվածքը: Աշխատանքը պետք է սկսել մենյուների ձևավորումից: Դրա համար հարկավոր է վերանայել և լավարկել նախկին կայքում առկա մենյուները, խմբավորել դրանք և բովանդակությունը դարձնել առավել հասանելի և տրամաբանական:

Այս գործընթացում օգտակար կլինի նաև ծառայությունների թվայնացման ստանդարտների ուղեցույցը, որը մշակվել և ստեղծվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության կողմից:

Բաժինները խմբավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ **Header**-ում տեղադրվող հիմնական մենյուների ընդհանուր քանակը **չպետք է գերազանցի 6-ը:**

Աշխատանքն ավելի համակարգված իրականացնելու համար կարող եք ստեղծել **Excel** ֆայլ (օրինակը կարող եք տեսնել այստեղ) և մենյուների հիերարխիան կառուցել այնտեղ. սա զգալիորեն կդյուրինացնի բովանդակության կառավարման համակարգում մենյուների ստեղծման գործընթացը: Մենյուների կառուցման մանրամասն նկարագրությունը ներկայացված է ուղեցույցի «Menu-ի ստեղծում՝ Header-ում կայքի հիմնական բաժինների շարքն արտացոլելու համար» բաժնում:

# 4. Մուտք և անվտանգություն

### Մուտք գործելու կարգ

Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ է լրացնել տրամադրված **մուտքանունը** (Login) և **գաղտնաբառը** (Password):

### Կրկնակի նույնականացում (2FA)

- **Ակտիվացում** - առաջին մուտքի ժամանակ համակարգը կպահանջի ակտիվացնել 2FA-ն: Անհրաժեշտ է ներբեռնել Google Authenticator կամ նմանատիպ հավելված և սկանավորել QR կոդը:
- **Մուտքի հաստատում** - հետագա բոլոր մուտքերի ժամանակ գաղտնաբառից բացի պետք է լրացնել հավելվածի գեներացրած 6-նիշանոց կոդը:




Մուտքից հետո ձախ կողմում կհայտնվի գլխավոր մենյուի սյունակը (բաժինների ցուցակը), որն ունի ստորև ներկայացված սքրինշոթի տեսքը:




Հապավումների և հասկացությունների վերաբերյալ մանրամասները ներկայացված են համանուն բաժնում:

## 5. Գլխավոր էջ (Home)

Մուտքից հետո բացեք **Home** բաժինը: Այն ունի **3 ենթաբաժին՝**




- **Nag Bar**
- **Banner**
- **Content Containers**

## 5.1 Nag Bar

Նախատեսված է կարճ և հրատապ ծանուցումների համար (մեկ նախադասություն + ըստ անհրաժեշտության հղում):




Բացեք Home → Nag Bar և ակտիվացրեք **Enabled՝** ցուցադրելու համար




Ընտրեք **Icon** (ըստ անհրաժեշտության) և հաղորդագրության տեսակը՝ **Type**:




Լեզուների ցանկից ընտրեք **բովանդակության** լեզուն և գրեք տեքստը:




Սեղմեք «V» **Պահպանել (Save)** կոճակը՝ վերևի աջ անկյունում: Ի դեպ՝ ցանկացած փոփոխություն պահպանելու համար անհրաժեշտ է էջի վերևի աջ անկյունում սեղմել պահպանման «V» կոճակը:




Բովանդակության պահպանումից հետո այն կունենա այս տեսքը կայքում.




## 5.2. Banner

Վիզուալ բլոկ է (նկար/տեսանյութ)՝ ցանկության դեպքում ուղեկցվող վերնագրով, տեքստով:

Լռելյայն երևում է **Header**-ի ներքևում: Եթե Nag Bar-ը ակտիվ է, այն կդրվի Header-ի և Banner-ի միջև:







## Banner-ի վերնագրի ստեղծում

Վիզուալ բլոկ՝ **վերնագիր + տեքստ + (ըստ անհրաժեշտության) կոճակ + պատկեր/վիդեո**:




1. Բացեք **Home** → **Banner** և սեղմեք **Create New**:
2. Ընտրեք **Title**:
3. **Translations** բաժնում ընտրեք հրապարակման լեզուն:
4. Գրեք վերնագիրը, ապա՝ **Save**:

**Նշում**. ստեղծված բոլոր տարրերը պահպանվում են **Add Existing** ցուցակում՝ հետագայում վերօգտագործելու համար:




Լեզուն ընտրելուց հետո ստորև առաջարկված պատուհանում գրեք վերնագրի տեքստը:



**Styling and Design** բաժնում ընտրեք **տառաչափը**, **գույնը** և մեկ տողում **սյուների քանակը** (Column size)։




**Hide on Devices** բաժնում կարող եք ընտրել սարքավորման այն տեսակը, որի վրա չեք ցանկանում ցուցադրել տվյալ նյութը։




Ցանկացած փոփոխություն պահպանելու համար անհրաժեշտ է էջի վերևի աջ անկյունում սեղմել պահպանման «V» կոճակը։




## Banner-ի տեքստի ստեղծում

**Օրինակ՝** ստորև տեղադրված նկարում կարմիրով նշված հատվածը։




Տեքստ ստեղծելու համար.

1. Սեղմեք **Create New** կոճակը
2. Ընտրեք **Rich Text** տարբերակը







Լեզուն ընտրելուց հետո **Content** պատուհանում գրեք տեքստը:







## Hide on Devices

Ընտրեք այն սարքի տեսակները (Desktop/Tablet/Mobile), որտեղ **չեք ցանկանում** ցուցադրել տվյալ բովանդակությունը:

## Banner - նկար/տեսանյութ

Վերնագրի և տեքստի ֆոնի համար տեղադրեք **նկար** կամ **տեսանյութ**:




Նկարի կամ տեսանյութի ֆայլը կարելի է ավելացնել **Banner Media** հատվածում:




Ֆայլը ավելացրեք հետևյալ ձևերից մեկով.

- **Upload from device** - ընտրեք ֆայլը ձեր սարքից:
- **Choose from library** - ընտրեք ֆայլը CMS-ի տեսադարանից:
- **Import from URL** - տեղադրեք աղբյուր նկարի/տեսանյութի հղումը:

Ստորև ընտրեք **Banner-ի** ֆոնի գույնն ու **թափանցիկությունը**:




Փոփոխություն պահպանելու համար անհրաժեշտ է էջի վերևի աջ անկյունում սեղմել պահպանման “V” կոճակը:

## 5.3 Content Containers/Գլխավոր էջի բովանդակություն

**Content Containers** բաժինը նախատեսված է Գլխավոր էջի ամբողջ բովանդակության կառուցման համար՝ տեքստ, պատկեր և այլ ֆունկցիոնալ բլոկներ:




**Create New** կոճակը սեղմելիս՝ բացվում է հետևյալ պատուհանը.



Էջում հասանելի են հետևյալ դաշտերը․

- **Internal Identifier** - գրեք հուշող անուն, որով հետագայում կգտնեք/կտարբերակեք կոնտենտը համակարգում:
- **Content Blocks** - այստեղ ստեղծում/կառավարում եք **Գլխավոր** էջի բովանդակությունը: Սեղմեք **Create New** և ընտրեք անհրաժեշտ բլոկի տեսակը:




### Ուշադրություն

Ստեղծված և պահպանված բոլոր տարբերակները պահպանվելու են **Add Existing** ցուցակում: **Customizations** դաշտում ընտրեք ցուցադրման չափը, տեքստի գույնը և ֆոնային գույնը:




**Create New** և **Add Existing** ցուցակներում հասանելի են հետևյալ բլոկները․

- **Title** - վերնագիր

- **Rich Text** - հիմնական տեքստ
- **Image** - նկար
- **Video** - տեսանյութ
- **Divider** - բաժանարար գիծ
- **Accordions** - ծալվող բաժիններ (բացվելիս՝ ներառում է տեքստ և/կամ կոճակ)
- **Alert** - հորիզոնական շերտով զգուշացում էջի ներքևում
- **Content Display** - արդեն պահպանված հոդվածների խումբ և դրանց ցուցադրում մեկ բաժնում
- **Button** - վերահասցեավորող կոճակ
- **Featured Links** - արտաքին հղումների ստեղծում/կառավարում
- **Embed** - ծրագրային կոդի ներդրում (տեսանյութ, քարտեզ)
- **Carousel** - բովանդակության դինամիկ ցուցադրում մեկ տողով
- **Audio** - ձայնագրության տեղադրում
- **Social Media Links** - սոցիալական հղումների տեղադրում
- **Code** - ծրագրային կոդի բլոկ
- **Gallery** - տեսադարան (նկարների ցուցադրում)
- **Service Card** - աջ սյունակում համառոտ տեղեկատվական քարտ
- **Group** - նույն կարգավորումներով կոմպոնենտների խումբ

**Divider - բաժանարար գիծ**

Էջի բաժինների միջև տեղադրվող գիծ՝ տեսողական տարանջատման համար:




**Divider** ստեղծելու համար հարկավոր է **Create New**-ում առաջարկվող ցանկից ընտրել **Divider** տարբերակը




**Creating Divider** պատուհանում լեզուների ցանկից ընտրեք այն լեզուն, որով հրապարակվելու է՝ կայքը տվյալ լեզվով բացելու դեպքում




**Title** դաշտում կարող եք գրել այն վերնագիրը, որը պետք է արտացոլվի բաժանարար գծի՝ **Divider**-ի վերևում




**Title**-ը պարտադիր չէ ստեղծել, բաժանարար գիծը կարող է դրվել առանց վերնագրի: **Icon** - փոքր տարբերակիչ պատկեր, որը (եթե սահմանեք) կցուցադրվի Divider-ի վերևում:



**Accordions** - ծալվող բլոկ է, որը սեղմելով՝ բացվում է ներսում տեղադրված բովանդակությունը:




Accordions ստեղծելու համար սեղմեք **Create New** և ընտրեք **Accordions**:




**Accordions** տարբերակն ընտրելիս՝ բացվում է հետևյալ պատուհանը



**Create New** սեղմելուց հետո աջ կողմում բացված պատուհանում **Translations** բաժնից ընտրեք հրապարակման լեզուն:




**Title** դաշտում գրեք Accordion-ի վերնագիրը (այն, ինչ կցուցադրվի կայքում):




**Content** դաշտում գրեք այն տեքստը, որը պետք է երևա բացված Accordion-ում:




**Action Button** բաժնում կարող եք ավելացնել կոճակ, որը վերահասցեավորում է կայքի այլ էջ:




1. **Action Button Link** - տեղադրեք այն էջի հղումը, դեպի ուր պետք է կատարվի վերահասցեավորումը (redirect)
2. **Keyboard Arrow Right** - ընտրեք կոճակի աջ կողմում ցուցադրվող նշանը (Icon):




Փոփոխություն պահպանելու համար անհրաժեշտ է էջի վերևի աջ անկյունում սեղմել պահպանման “V” կոճակը:

## 5.4 Content Display

Բլոկը նախատեսված է արդեն գոյություն ունեցող բովանդակությունը կայքում ցուցադրելու համար:

Ընտրեք **Content Display** և բացված պատուհանում լրացրեք՝ **Identifier** - ներքին հուշող անուն:
**Select Items Manually** - ակտիվացրեք, եթե ցանկանում եք ձեռքով ընտրել ցուցադրվող բովանդակությունը (ցանկից ընտրեք միաժամանակ մի քանի տարր):

Եթե չակտիվացնեք, օգտվեք **Filtered By** բաժնից՝ բովանդակությունը ավելացնելու համար ֆիլտրերով:

1. **Sort By** — կառավարեք ցուցադրման հերթականությունը՝ ընտրելով **Sort Field** և **Sort Type**:
2. **Styling & Design** — սահմանեք ցուցադրման պարամետրերը.
    - **Layout Options** (3 տարբերակներից մեկը),
    - **Item Image** (նկարի ցուցադրում),
    - **Item Category** (կատեգորիայի ցուցադրում և քանակ),
    - **Item Caption / Item Title** (վերնագրի/կապշնի ցուցադրում),
    - **Item Description** (նկարագրության ցուցադրում և տողի քանակ):
3. **Filters** - ցուցադրեք ֆիլտրեր և սահմանեք դրանց պարամետրերը:
4. **Pagination** - սահմանեք՝ էջի համարակալումը երևա՞ կայքում, և ինչպես բացվի կոնտենտը:
5. Փոփոխություն պահպանելու համար անհրաժեշտ է էջի վերևի աջ անկյունում սեղմել պահպանման “V” կոճակը:

# 6. Pages

Այս բաժնում ստեղծում և կառավարում եք կայքի՝ **Գլխավորից բացի** բոլոր հիմնական էջերը:




1. Բացեք **Pages** բաժինը:
2. Եթե սա առաջին էջն է, սեղմեք **Create Item**:
3. Եթե արդեն կան էջեր, նորը ստեղծելու համար սեղմեք աջ վերևի **+** նշանը:

**Create Item** կամ **+** կոճակներից որևէ մեկը սեղմելու պարագայում կբացվի նոր պատուհան, որտեղ առկա են հետևյալ կարգավորումները․




- **Status** - ընտրեք էջի կարգավիճակը՝ **Published** (հրապարակված), **Draft** (սևագիր), **Archived** (արխիվացված):
- **Page Type** - ընտրեք էջի դասակարգումը (տես՝ **Categories**):
- **Translations** - ընտրեք հրապարակման լեզուն:
- **Featured Image** - ավելացրեք էջի հիմնական պատկերը (վերբեռնում սարքից, ընտրություն տեսադարանից կամ արտաքին URL):




1. **Title** - սահմանեք էջի վերնագիրը:
2. **Short Description** - գրեք կարճ նկարագրություն (կցման/կիսման վայրերում կարտացոլվի):

3. **Slug** - հղման վերջի տարբերակիչ մասը (գեներացվում է ավտոմատ):
4. **Customize Slug** - ակտիվացրեք, եթե ցանկանում եք slug-ը սահմանել ձեռքով:
5. **Page Content** - տեսեք [5.3 Content Containers](#) (նույն ֆունկցիաները):
6. **Info Cards** - աջ սյունակում ցուցադրվող կարճ տեղեկություններ:
7. **File Attachment** - կցեք ֆայլեր (կցորդները երևում են էջի ներքևում):
8. **Styling & Design** - կարգավորեք վերնագրի/նկարի տեսանելիությունը և էջի դասավորությունը (Layout) բացված վիճակում:

# 7. Articles

Այստեղ ստեղծում և տեղադրում եք կայքի ենթաբաժինների՝ **հոդվածների** բովանդակությունը:




1. Բացեք **Articles** բաժինը:
2. Եթե սա առաջին հոդվածն է, սեղմեք **Create Item**:
3. Եթե արդեն կան հոդվածներ, նորը ստեղծելու համար սեղմեք աջ վերևի **+** նշանը:

**Create Item** կամ **+** սեղմելուց հետո կբացվի նոր պատուհան՝ հետևյալ կարգավորումներով.




1. **Status** - ընտրեք հոդվածի կարգավիճակը՝ **Published**, **Draft**, **Archived**:
2. **Layout** - սահմանեք էջի ցուցադրման դասավորությունը (բացված վիճակում):
3. **Article Type** - ընտրեք/ստեղծեք հոդվածի տեսակը (ներառում է նաև **Categories**):
4. **Categories** - ընտրեք հոդվածի դասակարգումը:
5. **Date Created** - սահմանեք հոդվածի ստեղծման ամսաթիվը/տարեթիվը (ցուցադրվում է կայքում):

Էջի ներքևի հատվածում առկա են նաև հետևյալ կարգավորումները․




1. **Translations** - այս ցանկից ընտրեք այն լեզուն, որով հրապարակվելու է հոդվածը՝ կայքը տվյալ լեզվով բացելու դեպքում:
2. **Featured Image** - այստեղ կարող եք տեղադրել այն նկարը, որը լինելու է հոդվածի հիմնական նկարը: Նկարը կարող եք վերբեռնել համակարգչից, CMS համակարգի տեսադարանից, կամ տեղադրել արտաքին հղում համացանցից:
3. **Title** - այս դաշտում սահմանեք հոդվածի վերնագիրը:

4. **Short Description** - հոդվածի բովանդակության կարճ նկարագիրը, որն արտացոլվելու է այնտեղ, որտեղ կկիսվեք էջի հղումով:
5. **Slug** - հոդվածի հղման մեջ վերջին հատվածը՝ տարբերակիչը, որը գեներացվում է ավտոմատ:
6. **Customize Slug** - եթե ակտիվացնեք սա, կարող եք հղման slug-ը սահմանել ինքնուրույն:
7. **Article Content** - տեսեք՝ **1.3. Content Containers - Գլխավոր էջում կոնտենտի ստեղծում** բաժինը, ֆունկցիոնալները նույնն են:
8. **Styling and Design** - այստեղ կարող եք սահմանել հոդվածն այլ կայքերում կամ էջերում տարածելու դեպքում վերնագրի և նկարի տեսանելիությունը:

# 8. Categories

Այս բաժնում են ստեղծվում դասակարգումները՝ ըստ որոնց կարող եք CMS համակարգում խմբավորել page-երը և article-ները: Հոդվածների և էջերի դասակարգումներն արտացոլվում են նաև կայքում: Օրինակ՝ ստորև տեղադրված նկարում կարմիրով նշված հատվածը:




Նոր դասակարգում ստեղծելու համար հետևեք ստորև նկարագրված քայլերին




1. Սեղմեք **Categories** բաժինը
2. Սեղմեք **Create Item** կոճակը, եթե պետք է ստեղծեք տվյալ կայքի համար ամենաառաջին Category-ն:
3. Եթե կայքում առկա են մեկ կամ ավել ստեղծված Category-ներ, նորը ստեղծելու համար սեղմեք աջ վերևի + նշանի վրա:

**Create Item** կամ + կոճակներից որևէ մեկը սեղմելու պարագայում կբացվի նոր պատուհան, որտեղ առկա են հետևյալ կարգավորումները․




1. **Translations** - այս ցանկից ընտրեք այն լեզուն, որով հրապարակվելու է դասակարգումը՝ կայքը տվյալ լեզվով բացելու դեպքում:

2. **Title** - այս դաշտում սահմանեք դասակարգի անվանումը:
3. **Parent Category** - այստեղից կարող եք ընտրել այն դասակարգը, որի ենթամաս պետք է հանդիսանա այն նոր ստեղծվող դասակարգը:
4. **Customizations** - այստեղ սահմանեք դասակարգի հետնամասի (background) և վերնագրի գույնը:
5. **Border Color** - այստեղ կարող եք ընտրել դասակարգի հետնամասից (background) տարբերվող գույն՝ դասակարգը շրջանակի մեջ առնելու համար:

# 9. Header

Header-ը կայքէջի վերին հատվածն է, որտեղ սովորաբար ցուցադրվում են կայքի լոգոտիպն ու անվանումը, կայքի հիմնական բաժինների շարքը և այդ երկուսի միջև ընկած բաժանարար գիծը: Օրինակ՝ ստորև տեղադրված նկարում կարմիրով նշված հատվածը:




Կայքում **Header** ստեղծելու համար հարկավոր է մուտք գործել CMS համակարգի համապատասխան բաժինը.




1. **Advanced**
2. **Common Sections**
3. **Header**

**Header** բաժին մուտք գործելիս՝ կտեսնեք հետևյալ էջը և իր հիմնական 3 ֆունկցիոնալները.




1. **Header** - այստեղ է ստեղծվում ամենավերևում՝ կայքի լոգոտիպն ու անվանումը:
2. **Header Accent Bar** - այստեղ է ստեղծվում կայքի լոգոտիպի/անվանման և հիմնական բաժինների շարքի միջև դրվող բաժանարար գիծը:
3. **Menu** - այստեղ է ստեղծվում կայքի հիմնական բաժինների շարքը:

## Header-ի վերին հատվածի ստեղծում

Առաջին **Header** տարբերակն ընտրելիս կբացվեն հետևյալ կարգավորումները.






1. **Translations** - այս ցանկից ընտրեք այն լեզուն, որով հրապարակվելու է դասակարգումը՝ կայքը տվյալ լեզվով բացելու դեպքում:
2. **Logo** - այստեղ տեղադրեք այն նկարը, որը հանդիսանալու է կայքի լոգոտիպը:
3. **Logo Alt Text** - այստեղ գրեք լոգոտիպի կարճ նկարագրությունը, որից օգտվելու են տեսողական սահմանափակում ունեցող օգտատերերը:
4. **Title** - այստեղ գրեք այն գերատեսչության անվանումը, որի համար ստեղծվում է կայքը:
5. **Title Mobile** - այստեղ գրեք նույն գերատեսչության անվանումը, որն արտացոլվելու է բջջային տարբերակով:
6. **Show Search Button/ Show Profile Button** - այստեղ կարող եք ակտիվացնել կայքի վերևի աջ անկյունում փնտրելու և անձնական հաշիվ մուտք գործելու կոճակները:

## Header Accent Bar-ի ստեղծում

Կայքի Header-ում Accent Bar ստեղծելը պարտադիր չէ և կրում է էսթետիկ բնույթ: Եթե ցանկանում եք ստեղծել, հետևեք այս 2 քայլերին.




1. Սեղմեք **Header Accent Bar**-ի վրա:
2. Ակտիվացրեք/ապաակտիվացրեք **Accent Bar**-ը և/կամ ընտրեք գույնը:

## Menu-ի ստեղծում՝ Header-ում կայքի հիմնական բաժինների շարքն արտացոլելու համար

1. Սեղմեք **Menu**-ի տողը
2. Սեղմեք **Create New** կոճակը

Էջի աջ կողմում բացված պատուհանում կտեսնեք հետևյալ կարգավորումները․







1. **Enable Drop Down Menu** - ակտիվացրեք կարգավորումը՝ հիմնական բաժինների շարքում ամեն բաժնի տակ ցուցակ արտացոլելու համար:
2. **Link** - այստեղ տեղադրվում են հղումները՝ հիմնական բաժիններ վերահասցեավորելու համար:

**Enable Drop Down Menu**-ն ակտիվացնելու պարագայում կայքում այն կունենա հետևյալ տեսքը․




**Enable Drop Down Menu**-ն ակտիվացրեք, և կբացվեն հետևյալ կարգավորումները․




1. **Translations** - այս ցանկից ընտրեք այն լեզուն, որով հրապարակվելու է դասակարգումը՝ կայքը տվյալ լեզվով բացելու դեպքում:
2. **Title** - այս դաշտում սահմանեք բաժնի անվանումը:
3. **Sections** - այս բաժնում ստեղծվում են ցանկի վերնագրերը: **Add Existing** ցուցակից կարող եք ընտրել արդեն ստեղծված վերնագիր: Նորը ստեղծելու համար սեղմեք **Create New** կոճակը, որից հետո կբացվի հետևյալ պատուհանը․




1. **Translations** - այս ցանկից ընտրեք այն լեզուն, որով հրապարակվելու է էջը՝ կայքը տվյալ լեզվով բացելու դեպքում:
2. **Title** - այս դաշտում սահմանեք ցանկի վերնագիրը:
3. **Create New** - սեղմեք այս կոճակը՝ բաժինների ցանկերում կայքի համար արդեն ստեղծված ենթաբաժիններն ավելացնելու համար: Բաժիններ և ենթաբաժիններ ստեղծելու քայլերը նկարագրված են այս ուղեցույցի [Pages](#) և [Articles](#) գլուխներում:

**Create New** կոճակը սեղմելիս կբացվի հետևյալ էջ.




1. **Translations** - այս ցանկից ընտրեք այն լեզուն, որով հրապարակվելու է էջը՝ կայքը տվյալ լեզվով բացելու դեպքում:
2. **Title** - այս դաշտում սահմանեք այն անվանումը, որով ցանկում արտացոլվելու է ենթաբաժինը:

3. **Link Type** - այս ցուցակից ընտրեք հղման տեսակը՝ արտաքին հղում, բաժին, ենթաբաժին կամ ծառայություն:
4. **Open New Tab** - ակտիվացնելու պարագայում ենթաբաժնի վրա սեղմելով՝ այն կբացվի նոր պատուհանում:
5. **Page Link** - այստեղից կցեք արդեն ստեղծված բաժնի/ենթաբաժնի արդեն ստեղծված հղումը, կամ ստեղծեք նորը՝ սեղմելով + նշանը:

**Enable Drop Down Menu**-ի բոլոր կարգավորումները սահմանելուց հետո դրանք հարկավոր է պահպանել: Պահպանելու համար ամեն էջը փակելուց առաջ սեղմեք աջ վերևի պահպանելու կոճակը.




## Link

Այժմ Header-ում կայքի հիմնական բաժիններից յուրաքանչյուրի տակ հղում դնելու համար պետք է վերադառնալ կարգավորումների առաջին պատուհան:




**Link**-ի դաշտի աջ կողմում սլաքը սեղմելուց կբացվի հետևյալ պատուհանը.




Այստեղ կարող եք ընտրել արդեն ստեղծված և պահպանված հղում ու կցել այն բաժնին:

Եթե կայքի համար բաժիններ դեռ ստեղծված չեն, կարող եք **Link**-ի դաշտի աջ կողմում սեղմել + նշանը, որից հետո կբացվի հետևյալ պատուհանը․




**Link**-ի բոլոր կարգավորումները սահմանելուց հետո դրանք հարկավոր է պահպանել՝ սեղմելով էջի վերևի աջ անկյունում պահպանման “V” կոճակը:



# 9. Footer

**Footer**-ը կայքէջի ամենաներքևի հատվածում գտնվող տարածությունն է, որում սովորաբար ցուցադրվում են կայքի հրապարակման վերաբերյալ տեղեկատվություն, կայքի հեղինակային իրավունքի պատկանելիություն, կայքի անվանում և լոգոտիպ: Օրինակ՝ ստորև տեղադրված նկարում կարմիրով նշված հատվածը:




Footer-ի կարգավորումներ մուտք գործելու համար բացեք հետևյալ բաժիններն՝ ըստ հերթականության․




1. **Advanced**

2. **Common Sections**
3. **Footer**

Footer մուտք գործելիս՝ կբացվի նոր էջ՝ հետևյալ կարգավորումներով.



1. **Footer Links** - **Create New** կոճակը սեղմելով՝ կարող եք ստեղծել նոր հղում իր անվանումով, որը կտեղադրվի Footer-ում:
2. **Translations** - այս ցանկից ընտրեք այն լեզուն, որով հրապարակվելու է էջը՝ կայքը տվյալ լեզվով բացելու դեպքում:
3. **Standards Text** - այս դաշտում գրեք, թե որ սկզբունքների համաձայն է ստեղծված կայքը:

4. **Copyright Text** - այս դաշտում գրեք, թե ում են պատկանում կայքի հեղինակային իրավունքները:
5. **Logo Alt Text** - այս դաշտում գրեք կայքի լոգոտիպի կարճ նկարագրությունը, որից օգտվելու են տեսողական սահմանափակումներ ունեցող օգտատերերը:
6. **Logo** - այս պատուհանում կարող եք տեղադրել կայքի լոգոտիպ:

## Footer Links

**Create New** կոճակը սեղմելիս էջի աջ կողմում բացվում է հետևյալ պատուհանը.




1. **Translations** - այս ցանկից ընտրեք այն լեզուն, որով հրապարակվելու է էջը՝ կայքը տվյալ լեզվով բացելու դեպքում:
2. **Title** - այս դաշտում սահմանել վերնագիրը, որի տակ դրվելու է հղումը:
3. **Links** - այստեղից ընտրեք արդեն ստեղծված հղում կամ ստեղծեք նորը:

## Links

Նոր հղում ստեղծելու համար սեղմեք **Create New** կոճակը, որից հետո կբացվի մի նոր պատուհան՝ հետևյալ կարգավորումներով.




1. **Icon Type** - այստեղ ընտրեք, թե Footer-ում հրապարակվող հղման կողքին ինչ նշան պետք է լինի կամ ընտրեք None, եթե նշանի կարիք չկա:
2. **Link** - սեղմեք դաշտի աջ կողմում + նշանը, որից հետո կբացվի նոր պատուհան:

**Footer**-ի հղումների կարգավորումները սահմանելուց հետո դրանք հարկավոր է պահպանել: Պահպանելու համար ամեն էջը փակելուց առաջ սեղմեք աջ վերևի պահպանելու **“V”** կոճակը:

